այսր և անդր, այլք յարեցան յեկեղեցին Յունաց, որ և ցարդ խոստովանին թէ նախնիք իւրեանց էին յազգէն Հայոց, եւ ցուցանեն իսկ զեկեղեցին, զոր գրաւեալ են Յոյնք, և կամ աւերակ՝ 'ի սոցանէ երկու ընտանիք միայն զաղթեալ են 'ի Բեթղեհէմ և երկու յԵրուսաղէմ։

Այլ վասն եկեղեցւոյն Ս. Յակոբայ, զոր չինեալ է արքայն Հեթում 'ի նմին ժամանակի, 'ի յիշատակ բարեպաշտ տիկնոջ իւրոյ Զապել Թագուհւոյ 'ի Քրիստոս հանգուցելոյ, չէր ուրեք յիշատակութիւն ինչ մինչ ցգիւտ արձանագրութեանս։ Զտեղի եկեղեցւոյս, զոր ցուցանեն արաբացիք Քերեքայ, արարեալ են իբր հիւրանոց, և յաւերակաց նորին գտեալ են զքարն արձանագրեալ, եւ սկիհ մի արծաթ, գրեալ 'ի չրթունս հայկական տառիւք, զոր խոստացան զայն եւս բերել, այլ ագահութիւնն կաշկանդեաց զոտս նոցա։ Յետ գրելոյ մեր զայսչափ ինչ տեղեկութիւն դարձցուք վերստին 'ի կարգ պատմութեանս։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Շինութիւնք Լեւոն Բ. Թագաւորի։ Փնտռողաբար Սուլթանն Եգիպտոսի, արշաւանք եւ գործք նորին մինչ 'ի մահն։ Մեկիք Մանսուր. Ասուն Պաղամայիդայ և կոտորումն քրիստոնէից։ Բարձումն իշխանութեան Լատինաց յԱսորեաց։ Ծռազատիկ։

ԼԵՒՈՆ Բ. արքայ Հայոց Կիլիկիոյ, որդի արքային Հեթմոյ Ա. 'ի վերջին ամս թագաւորութեան իւրոյ արար շինուածս յԵրուսաղէմ, որպէս աւանդի 'ի յիշատակարանս ինչ, օրինակ զայս։

«Ի թուականութեանս Հայոց եօթն հարիւր երեսուն և հինգ (1286)։ Նուստ ծառայ ամենայն քրիստոնէից Ծալլայ վարդապետս՝ յարեւելից եկաք յաստուածակոխ քաղաքն Երուսաղէմ արդեամբք և ընչիւք սուրբ թագաւորին Լեւոնի, և Տէր Յակոբ Կաթուղիկոսի։ Սրբոց Յակոբեանց եկեղեցւոյ դաւիթս սալեցաք, եւ Հրեշտակա-